

ОБРАЗОВАНИЕ

Կրթական համակարգի կատարելագործումը որպես աղքատության հաղթահարման հիմնական գործոն

Գրիգորյան Հ. Ա.

«Հայաստանում Ֆրանսիական Համալսարան Հիմնադրամի»
բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող (Երևան, Հայաստան)
harutyun.grigoryan99@gmail.com

Վճռորոշ բառեր՝ աղքատության հաղթահարում, կրթություն, կրթական համակարգ, ուսուցման գործընթաց.

Улучшение системы образования как ключевой фактор преодоления бедности

Григорян А. А.

Студент 4 курса бакалавриата Французского университета в Армении (Ереван, Армения)
harutyun.grigoryan99@gmail.com

Аннотация. В статье рассматриваются вопросы совершенствования системы образования и подтверждается позиция о том, что совершенствование системы образования является ключевым фактором преодоления бедности. Провал образования в будущем приводит к увеличению бедности, что, в свою очередь, приводит к гораздо более высоким социальным и финансовым затратам для государства.

Ключевые слова: борьба с бедностью, образование, система образования, учебный процесс.

Improving the education system as a key factor in overcoming poverty

Grigoryan H. A.

4th year undergraduate student of the "French University in Armenia" (Yerewan, Armenia)
harutyun.grigoryan99@gmail.com

Abstract. The article addresses the issues of improving the education system and confirms the position that improving the education system is a key factor in overcoming poverty. The failure of education in the future leads to increased poverty, and consequently much higher social and financial costs for the state.

Keywords: managerial thinking, public administration, governance principles, state, manager-subordinate relations.

Աղքատությունն երևույթը այսօր համաշխարհային հանրության առջև ծառայած մի կարևորագույն հիմնախնդիր է, որը հղի է կործանարար հետևանքներով, և իր անդառնալի ազդեցությունը կարող է ունենալ յուրաքանչյուր երկրի տնտեսության, մշակույթի, սոցիալական հարաբերությունների, քաղաքականության ու այլ ոլորտների վրա: Աղքատությունը մարտահրավեր է, որի հաղթահարման նպատակով պայքարում են ինչպես բազմաթիվ պետություններ, այնպես էլ համաշխարհային կազմակերպություններ, ինչպիսիք են Միավորված ազգերի կազմակերպությունը (այսուհետ՝ ՄԱԿ), Համաշխարհային բանկը, ՅՈՒՆԻՍԵՖ-ը (UNICEF), Չայլդ Ֆանդը (Child Fund) և այլ համաշխարհային կազմակերպություններ: Հենց այս կազմակերպությունների կողմից էլ մշակվում և իրականացվում են մի շարք ռազմավարական ծրագրեր, որոնք ուղղված են աղքատության կրճատմանը:

Աղքատությունն ավելին է, քան կայուն կենսամիջոցներ ապահովելու համար անհրաժեշտ եկամտի և ռեսուրսների պակասը: Աղքատությունը հանգեցնում է ոչ միայն սոցիալական խտրականության ու մեկուսացման, այլ

սահմանափակում է այնպիսի կարևոր ծառայությունների հասանելիությունը, ինչպիսիք են կրթությունը, առողջապահությունը և այլ հիմնական ծառայությունները:

Կարևոր է նախ անդրադառնալ «աղքատություն» հասկացության բնորոշմանը: Տեսական գրականությունում չկա «աղքատություն» հասկացության հստակ սահմանում: Գիտնականները բազմաթիվ սահմանումներ են առաջ քաշել: Աղքատության խնդրին անդրադարձել են դեռևս այնպիսի մտածողներ, ինչպիսիք են Պլատոնը և Արիստոտելը: Պլատոնը գտնում էր, որ ցանկացած հասարակություն բաժանվում է հարուստների և աղքատների: Նա մեկ պետության մեջ տեսնում էր երկու պետությունների գոյություն՝ հարուստների պետություն և աղքատների պետություն: Արիստոտելը կիսում էր Պլատոնի կարծիքն ու գտնում, որ աղքատությունը հղի է ծանր հետևանքներով: Նա հասարակությունը բաժանում էր հարուստների, միջին խավի և աղքատների: Նրանք երկուսն էլ գտնում էին, որ պետությունը պետք է հոգ տանի աղքատների մասին, քանի որ աղքատությունը իր հերթին հանգեցնում է ապստամբությունների և հանցագործությունների [5, p. 9]:

20-րդ դարի սկզբին ուսումնասիրելով աղքատությունը որպես սոցիալ-տնտեսական երևույթ, Ս.Ռոունտրին նշել է. «Աղքատությունը մարդու հիմնական կարիքների, պահանջմունքների՝ սննդի, հագուստի, բնակարանի, բավարարման հնարավորությունների պակասն է» [4, с. 494]: «Աղքատությունն առաջանում է այն ժամանակ, երբ մարդը իր կենսական կարիքները բավարարել չի կարողանում կամ էլ տվյալ հասարակության մեջ բացակայում են հիմնական ապրելակերպի անհրաժեշտ միջոցները [3, с. 75]:

Մեր մոտեցմամբ աղքատությունը ունի բազում ասպեկտներ, այն ընդգրկում է այ միայն սոցիալական, այլ նաև քաղաքական, հոգևոր-մշակութային ոլորտները: Աղքատությունը կենսաբանական, սոցիալական, հոգևոր-մշակութային նվազագույն պահանջմունքները բավարարելու անհնարինությունն է:

Աղքատության պատճառները տարբեր են, դրանք կարելի է դասակարգել երեք խմբի՝ անհատական, կառուցվածքային և ֆատալիստական:

Առաջինի դեպքում աղքատության ձևավորման պատճառը հենց անհատի մեջ է: Աղքատությունը անհատի ծուլության, բնավորության թուլության, սխալ ընտրության և մարդկային բնավորության բացասական գծերի արդյունք է:

Ըստ կառուցվածքային մոտեցման՝ այն բացատրվում է գոյություն ունեցող տնտեսական, քաղաքական, սոցիալական ոչ կատարյալ համակարգի առկայությամբ: Այս դեպքում աղքատության պատասխանատվությունը դրվում է ոչ թե անհատի, այլ պետության վրա, քանի որ տնտեսական համակարգը չի ապահովում համապատասխան աշխատատեղերով: «Շատ հաճախ երկրները հայտնվում են աղքատության մեջ, որովհետև նրանց ղեկավարները չգիտեն, թե որ քաղաքականությունը բարեկեցիկ կդարձնի իրենց քաղաքացիներին» [1, 71-107 էջեր]:

Աղքատության ֆատալիստական պատճառները կապված չեն սուբյեկտի հետ, առաջանում են նրա կամքից և գիտակցությունից անկախ (Փորս-մաժորային իրավիճակներ, տնտեսական ճգնաժամ, արտակարգ դրություն):

Կրթությունը աղքատության հաղթահարման ամենաարդյունավետ միջոցներից է: Վիճակագրության տվյալների վերլուծությունը վկայում է, որ ուղղակի կապ կա բնակչության կրթության մակարդակի և աղքատության միջև: Կրթության ձախողումը ապագայում առաջ է բերում աղքատության ավելացման և հետևաբար սոցիալական և ֆինանսական շատ ավելի մեծ ծախսեր պետության համար:

Կրթությունը հոգևոր մշակույթի ամենակազմակերպված ոլորտն է, համակարգ, որն ուղղակի կամ անուղղակի ձևով իր ազդեցությունը, պահանջներն ու ստեղծագործական ազդակներն է տարածում անհատի ձևավորման, երկրի տնտեսական, քաղաքական, սոցիալական, հոգևոր և այլ ոլորտների կազմակերպման ու զարգացման վրա:

Բոլոր ժամանակներում մարդու գլխավոր հարստությունը համարվել է կրթությունը: Նշենք, որ կրթության դերն էապես արժևորվել է դեռևս մեր թվարկությունից առաջ, երբ Պլատոնը հիմնադրեց Աթենքի ակադեմիան, որը Եվրոպայում բարձրագույն կրթություն ստանալու առաջին ինստիտուտն է համարվում [6]:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետով կրթությունը բնորոշվում է որպես անձի, հասարակության, պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց, որը նպատակամղված է գիտելիքները պահպանելուն ու նոր սերունդներին փոխանցելուն»:

Ներկայումս մարդկային զարգացման քաղաքականության հիմնական գերակայություններից են կրթության որակի, մատչելիության, արդյունավետության ապահովումը, քանի որ հենց կրթության միջոցով է հնարավոր լուծել պետության ռազմավարական այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են կայուն տնտեսական զարգացումը, աղքատության հաղթահարումը, ազգային անվտանգությունը, ժողովրդավարական հասարակության ստեղծումը, և գիտելիքահեն հասարակության կայացումը:

Կրթության իրավունքն ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ: Մասնավորապես ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածը սահմանում է. 1. Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է: Յուրաքանչյուր ոք օրենքով սահմանված դեպքերում և կարգով ունի մրցութային հիմունքներով պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունք»:

Բոլոր պետություններում էլ կրթությունը հետապնդում է միևնույն նպատակները, որոնք անկասկած համադրում են քաղաքակրթության համամարդկային արժեքները ազգային հետ: Այդ կապակցությամբ միջազգային կազմակերպությունների կողմից ընդունվել են մի շարք հռչակագրեր, որոնց համաձայն մարդասիրական կրթության վերջնական նպատակը պետք է դառնա յուրաքանչյուր անհատի մոտ համամարդկային արժեքների ընկալումն ու դրանց

համապատասխան վարքագծի ձևավորումը, որի վրա հիմնված է մարդկության մշակույթը:

«Կրթության» մասին ՀՀ օրենքը սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոն, ինչպես նաև ամրագրում՝ «Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը» (հոդված 4):

Կրթական ոլորտում պետական քաղաքականության արդյունավետությունը էական նշանակություն ունի հասարակության ու պետության առաջընթացի համար կայուն հիմքեր ստեղծելու, ինչպես նաև մարդու կենսական կարևոր շահերի ապահովման համար: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է բացահայտել, թե ինչն է կազմում կրթության բովանդակականությունը:

Կրթության մասին ՀՀ օրենքի 11-րդ հոդվածում ամրագրված է. «Կրթության բովանդակությունը հասարակության հոգևոր, տնտեսական և սոցիալական առաջընթացի հիմնական գործոններից մեկն է և նպատակաուղղված է երիտասարդ սերնդի դաստիարակմանը, պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման, նրանց ինքնորոշման և ինքնադրսևորման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական պետության ստեղծմանն ու կատարելագործմանը:

Կրթության բովանդակությունն ապահովում է՝

1) սովորողների աշխարհաճանաչման ձևավորումը գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին (աստիճանին) համապատասխան:

2) սովորողների կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքների յուրացումը:

3) հասարակության կատարելագործումը և ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող ժամանակակից անհատի ու քաղաքացու ձևավորումը:

4) հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրությունն ու զարգացումը»:

Այսօր շատ կարևոր է կրթության ոլորտում հավասար հնարավորությունների ստեղծումը,

որպեսզի կրթությունը կապվի մարդու ընդունակությունների, այլ ոչ թե նյութական վիճակի հետ: «Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից: Մասնագիտական կրթության իրավունքի սահմանափակումները նախատեսվում են օրենքով: Ղեկությունը կրթության իրավունքն ապահովում է կրթության համակարգի բնականոն գործառնությանը և կրթությունն ստանալու համար սոցիալ-տնտեսական պայմանների ստեղծմանը...» (հոդված 6):

Չնայած անկախությունից ի վեր կրթության ոլորտում իրականացվել են մի շարք բարեփոխումներ, այնուամենայնիվ կրթության համակարգը դեռևս հեռու է իր առաքելության լիարժեք և ամբողջական իրականացումից: Այսօր առաջ են եկել նոր մարտահրավերներ, որոնց հաղթահարմամբ է պայմանավորված կրթության ապագան:

Մասնավորապես՝ կորոնավիրուսի (Covid-19) համավարակով պայմանավորված, Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին 2020 թ. մարտի 16-ի N 298-Ն Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման ընդունումից հետո դպրոցները անցում կատարեցին հեռավար ուսուցման, որի պարագայում լրջագույն խնդիր էր կրթության մատչելիության և հավասար հնարավորությունների ապահովումը սոցիալական բոլոր խավերի համար:

Վիճակագրությունը ցույց տվեց, որ հիմնականում տուժեցին սոցիալապես խոցելի ընտանիքների երեխաները՝ հնարավորությունների հասանելիության պատճառով (տեխնիկական միջոցների բացակայություն, ինտերնետ կապ):

Ուսումնասիրելով կրթական համակարգում առկա բացերը, կրթական համակարգի հեռանկարներն ու մարտահրավերները, ակներև է, որ մեր հանրապետությունում կրթության որակի բարելավման ուղղությամբ աշխատանքները պետք է լինեն շարունակական և ավելացվեն այն ֆինանսական միջոցները, որոնք ուղղվում են ուսումնական գործընթացի կազմակերպմանը:

Ներկայումս կրթական համակարգի արդյունավետության բարձրացման համար Կառավարությունն իր առջև դրել է մի շարք ծրագրային նպատակներ, մասնավորապես՝

1. Հանրակրթության ոլորտում Կառավարության ծրագրային նպատակներն են՝

➤ բարձրացնել նախադպրոցական կրթության մատչելիության և հասանելիության աստիճանը բոլոր համայնքներում՝ մինչև

2023 թվականը 3 տարեկանից բարձր երեխաների ընդգրկվածությունը հասցնելով 70 տոկոսի.

- ներդնել դպրոցական կառավարման բարելավված համակարգ.
- ներդնել փոքրաթիվ աշակերտական համակարգ ունեցող դպրոցների կրթության կազմակերպման արդյունավետ մոդելներ.
- ապահովել բոլոր մարզերի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտներին կայուն դպրոցական սննդով.
- անցնել համընդհանուր ներառական հանրակրթությանը հանրապետության բոլոր մարզերում և Երևան քաղաքում մինչև 2023 թվականը.
- նոր բովանդակություն հաղորդել 12-ամյա կրթությանը՝ վերանայել չափորոշիչները, ուսումնական պլանը և առարկայական ծրագրերը՝ խթանելով քննական մտածողությունը, նորարարությունը և վերլուծական ու ստեղծագործական հմտությունները՝ առանձնակի ուշադրություն դարձնելով քաղաքացիական, ֆինանսական և ձեռնարկատիրական կրթությանը:

2. Մասնագիտական կրթության ոլորտի բարեփոխումները միաված են լինելու՝

- կրթական ծրագրերի արդիականացմանը՝ ուղղված տնտեսության և աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին.
- նախնական և միջին մասնագիտական կրթական հաստատություններում կրթության և ուսուցման որակը բարձրացնելու համար գործատուների ակտիվ ներգրավմամբ ներդնել և ընդլայնել դուրս կրթական համակարգը՝ հաշվի առնելով տարածքային զարգացման գերակայությունները:

3. Բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումները միաված են լինելու՝

- բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարության և ակադեմիական ազատությունների ընդլայնմանը, արդյունավետ կառավարման, հավասարակշռված հաշվետվողականության և թափանցիկության մեխանիզմների ինստիտուցիոնալ հենքի ստեղծմանը.
- բարձրագույն կրթության որակի շարունակական բարելավմանը, բարձրագույն կրթության մեջ հետազոտական բաղադրիչի շարունակական մեծացմանը.
- կրթական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի վերանայմանը՝ ուղղելով դեպի ուսումնառության վերջնարդյունքները՝ որակավորումների ազգային շրջանակի (ՈԱԾ) պահանջներին համապատասխան.

- ուսանողի անհատական կրթական հետագծի ապահովմանը՝ կրթական ծրագրերի ճկուն կառուցվածքի ներմուծմամբ.
- բարձրագույն կրթության միջազգայնացմանը, շարժունության հնարավորությունների ընդլայնմանը. եվրոպական բարձրագույն կրթական տարածքի ուղղությունների և սկզբունքների իրականացմանը.
- բարձրագույն կրթության ֆինանսավորման աստիճանական ավելացմանը, ֆինանսավորման ծավալների ընդլայնմանը՝ զուգընթաց վերանայելով ուսումնական հաստատություններին տրամադրվող ֆինանսական միջոցների սկզբունքները, ֆինանսական աջակցության հասցեականությունը, նպատակայնությունը, ուսումնական հաստատության գործունեության արդյունավետության ցուցանիշները:

4. Գիտության ոլորտում անհրաժեշտ է՝

- բարձրացնել գիտության ֆինանսավորման արդյունավետությունը, տրամադրվող միջոցներն ուղղել երկրի տնտեսության կարիքներից բխող և գիտական հետազոտությունների արդի պահանջներին համապատասխանող ուղղություններին.
- Հայաստանում ապրելու և ստեղծագործելու ժամանակակից պայմաններ ստեղծել երիտասարդ գիտնականների համար, Հայաստանի զարգացման ծրագրերում ներգրավել արտասահմանում գտնվող հայ գիտնականներին: Հայաստանի գիտության ոլորտը պետք է լինի միջազգայնորեն մրցունակ, միջազգային գիտական նվաճումների միտված, երկրի տնտեսության մրցունակությանը և անվտանգությանն ամիջականորեն նպաստող.
- ստեղծել գիտական, գիտակրթական և գիտատեխնոլոգիական գերազանցության կենտրոններ՝ բեկումնային զարգացում ապահովող որոշ տեխնոլոգիաների ոլորտում.
- սերտացնել կրթություն-գիտություն կապը՝ նպաստելով բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների ցանցերի ձևավորմանը՝ ըստ գիտական գործունեության բնագավառների և ապահովելով 34 ուսանողների տեղաշարժը ցանցի մաս կազմող բարձրագույն ուսումնական հաստատություններում և գիտական կազմակերպություններում.
- գիտության ոլորտում ներդնել արդյունավետության վրա հիմնված ֆինանսավորման մեխանիզմներ.
- ստեղծել անհրաժեշտ պայմաններ հայերենի՝ իբրև ժամանակակից գիտության լեզվի գործառության ու զարգացման համար:

Կառավարության կողմից նշված նպատակներին հասնելու համար կարևոր են կրթական և գիտական ծրագրերի շարունակականության ապահովումը, կրթական և գիտական ծառայությունների բովանդակության և ծրագրերի՝ շուկայի, հասարակության և պետության պահանջարկին համաժամանակեցումը [2]:

Այսպիսով, կրթական համակարգի բարեփոխումների առաջնային խնդիրներն են՝ կրթական համակարգի բոլոր մակարդակներում կրթության որակի և արդյունավետության բարձրացումը, դրանց համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին, մատչելի/հասանելի կրթության ապահովումը բնակչության բոլոր խավերի համար:

Հաշվի առնելով 21-րդ դարի մարտահրավերները, կրթության կազմակերպման գործընթացները պետք է հնարավորինս ճկուն լինեն և ապահովեն կրթության մատչելիությունը և հասանելիությունը:

Կրթական համակարգի կատարելագործումը աղքատության հաղթահարման հիմնական գործոն է: Որակյալ կրթությունը բարելավում է մարդկանց կյանքն ու բերում կայուն զարգացման: Կրթությունը բանալի է, որը հնարավորություն է տալիս մարդկությանը ճեղքել

աղքատության շղթան ու հասնել բարեկեցության:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Աճեմօղլու Տ., Ռոբինսոն Ջ. Ա.**, «Ինչու՞ են ձախողվում պետությունները», Երևան, «Անտարես», 2018թ.:
2. «ՀՀ կառավարության ծրագիր»՝ հաստատված ՀՀ կառավարության 08.02.201թ. №65-Ա որոշմամբ
3. **Ишмуратова В. Г.**, Содержание категории «бедность» в новейшей истории России. «Проблемы современной экономики». Санкт-Петербург, 2010.
<http://www.m-economy.ru/art.php?nArtId=3341>
4. **Медведев Д.**, Черчилль. Биография. Оратор. Историк. Публицист. Амбициозное начало 1874-1929, Москва 2016.
5. **Vaughan, Sharon K.** Poverty, Justice, and Western Political Thought, Lexington Books, 2009.
6. <https://www.britannica.com/biography/Plato>

Տժնա/Հանձնվել է՝ 17.03.2021

Рецензирована/Գրախոսվել է՝ 20.03.2021

Принята/Ընդունվել է՝ 25.03.2021